63
Հ-25

# ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ

# ՎՈՐՈՇՈՒՄԸ

1934թ

09 SEP 2013

63
Z-25

30 JUL 2018

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

# ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

## ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԸ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՅՆԱՑՐԱԾ ՀՈՏԸ (ՖԵՐՄԱՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ) ՍՊԱՍԱՐԿՈՂ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ ԴՐԱՄՈՎ ՅԵՎ ՆԱՏՈՒՐԱՅՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՅԵՎ ՄԱՏՂԱՑՆԵՐԻ ՍԱՏԿՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ ՏՈՒՅԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1934 ՅԵՐԵՎԱՆ

14801
54-Л
Ս 839
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

Սրբագրիչ՝ Խ. Այվազյան
Հանձնվել է արտադրության 1934 թ. հունիսի 13-ին
Ստորագրված է տպագրելու 1934 թ. հունիսի 20-ին
Թույլատրված է Գլ. լիտ. № 270
Հրատ. № 115, տիրաժ 1500, պատվեր № 432

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50

# ՎՈՐՈՇՈՒՄ

## Հ.Ս.Խ.Հ. ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

13 հունիսի, 1934 թ.

*Անասնապահական կոլտնտ. ապրանքային ֆերմաները և կոլտնտեսական համայնացրած հոտը (ֆերմաներից դուրս) սպասարկող կոլտնտեսականներին դրամով և նատուրայով պարգևատրելու և մատղաշների սատկումների առթիվ տույժ սահմանելու մասին։*

*1. Մատղաշների աճեցման գործում կոլտնտեսականների շահագրգռվածությունն էլ ավելի բարձրացնելու նպատակով՝ սահմանել դրամական նատուրայով պարգևատրելու հետևյալ որինակելի կարգը.*

## Ա. ԽՈՇՈՐ ՅԵՂՋ. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

*1. Ապրանքային ֆերմաներում և համայնացրած հոտում (ֆերմաներից դուրս) յեղած յուրաքանչյուր 100 գլուխ կովերից և առաջնածին յերինջներից սահմանել 75 գլուխ վեց ամսական հասակի հորթեր ստանալու նորմա։*

*2. Առաջին կետում նախատեսնված 100 գլուխ կովերից, առաջնածին յերինջներից ստացվելիք հորթերի տարեկան նորմայից ավելի աճեցրած բոլոր հորթերը պետք է տալ ֆերմայում և համայնացված հոտում աշխատող լավագույն հորվածարյին կոլտնտեսականներին վորպես պարգևատրում։*

*3. Զուգավորման գործը (տնտեսության մեջ յեղած ամբողջ տարեկան մայրական կազմը յենթակա յե զուգավորման) և ծինը հաջող կազմակերպելու համար նատուրայով պարգևատրելուն զուգընթաց սահմանել նաև դրամական վճարումներ հետևյալ չափով.—*

*Բեղմնավորման յենթակա մայրերը 100-ով զուգավորելու և բեղմնավորված յուրաքանչյուր 100 կովից 85 կենդանի հորթից*

ավել ստացված յուրաքանչյուր հորթի համար նախրապահին և տավարապահին կամ կթող տավարապահին, տրվում է 5 ռուբլի, իսկ ցուլապահին՝ 3 ռուբլի, ըստ որում՝ այդ գումարի հաշվին բեղմնավորման կամպանիան հաջող ավարտելուց հետո, միանվագ տրվում է տավարապահին և նախրապահին 15-ական ռուբլի, իսկ ցուլապահին՝ 10 ռուբլի: Մնացած գումարը վճարվում է ծինը հաջող կազմակերպելուց հետո:

## Բ. ԽՈԶԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Յուրաքանչյուր մերունի համար սահմանել միջին հաշվով 5 խոճկոր աճեցնելու տարեկան նորմա:

2. Առաջին անգամ ծնող մերունների համար սահմանել 4 գլուխ խոճկոր աճեցնելու տարեկան նորմա:

3. Սահմանված նորմայից ավել ստացված խոճկորների մի յերրորդից մինչև կեսի սահմաններում, նայած ավել ստացված խոճկորների քանակին, տրվում է տվյալ բրիգադի անդամ կոլտնտեսականներին, որպես նատուրալ պարգևատրում:

4. Նատուրալ պարգևատրումը խոզաբուծական բրիգադին հանձնում է կոլտնտեսության վարչությունը, 2 ամսականից ոչ ավել հասակ ունեցող խոճկորներով, յերբ բրիգադը լրիվին կատարել է մատղաշների աճեցման և պահպանման տարեկան առաջադրանքը:

5. Նատուրալ պարգևատրման հետ միասին պետք է պահպանել նաև հավելյալ դրամական վճարումները, այն է՝ տարեկան նորմայից ավել զուգավորված յուրաքանչյուր մերունի համար 1 ռուբլի, իսկ մինչև 2 ամսական հասակը հասցրած նորմայից ավել յուրաքանչյուր խոճկորի համար 1 ռուբլի:

6. Պարգևատրման 25 տոկոսը վճարվում է մերունների զուգավորման միջոցին, իսկ 75 տոկոսը՝ առաջադրանքը հաջող կատարելուց հետո:

7. Բրիգադի տարեկան արտադրական առաջադրանքը կատարված է համարվում, յերբ նրան հանձնված մերուններից ստացված խոճկորներն աճեցվել և պահպանվել են մինչ ապրանքային յելույթի հանձնումը, կամ մինչև խոճկորների մերունները հիմնական հոտը փոխադրելը:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна



## Գ. ՎՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Տարվա սկզբում յեղած յուրաքանչյուր 100 մաքուց սահմանել 84 գլուխ գառների աճեցման տարեկան նորմա:

2. Տարվա վերջում բրիգադի համար սահմանված նորմայից ավել աճեցրած գառներից այդ նույն բրիգադի համար յուրաքանչյուր կոլտնտեսականին տրվում է, նայած թե ինչ չափով է կատարված մատղաշների աճեցման արտադրական առաջադրանքը, 1—3 գառ:

3. Յուրաքանչյուր անգամ և յուրաքանչյուր բրիգադի համար, նայած թե բրիգադը որքանով է գերակատարել արտադրական առաջադրանքը, կոլտնտվարչությունը կոնկրետ որոշում է կայացնում—քանի գլուխ գառներով պարգևատրել կոլտնտեսականներին:

4. Տարեկան արտադրական առաջադրանքից ավելի աճեցրած մնացած գառների հանդեպ բրիգադին տրվում է դրամական պարգևատրում հետևյալ սահմաններում.—

ա) Կարակուլ և մերինոս խոյերով զուգավորված և հաջող ծնած յուրաքանչյուր մաքու համար 3 ռուբլի:

բ) Բալբաս ցեղի խոյերով զուգավորված և հաջող ծնած յուրաքանչյուր մաքու համար 3 ռուբլի:

գ. Պարգևատրման 25 տոկոսը վճարվում է զուգավորման կամպանիայի ավարտումից հետո, իսկ մնացած 75 տոկոսը՝ հաջող ծին կազմակերպելուց հետո:

2. Զարամտության և անփութության հետևանքով անասնապահական կոլտնտապրանքային ֆերմաներում և կոլտնտ. համայնացրած հոտում (ֆերմայից դուրս) մատղաշների սատկումների դիմաց տույժի հետևյալ չափանիշները սահմանել՝

1. Մինչև 3 ամսական հասակ ունեցող առաջին սատկած հորթի դիմաց, այն կոլտնտեսականից, որի հանցանքով սատկումը տեղի յե ունեցել, նրան հասանելիք աշխորերի քանակից պակասեցնել մինչև 10 աշխոր (տույժ), յերկրորդ սատկած հորթի դիմաց՝ մինչև 15 աշխոր: Ութ ամսականից բարձր հասակ ունեցող սատկած յուրաքանչյուր հորթի դիմաց սահմանել տույժ 25 աշխորից ոչ պակաս:

2. Մինչև 2 ամսական հասակ ունեցող յուրաքանչյուր առաջին սատկած խոճկորի (գոճի) դիմաց, այն կոլտնտեսականից,

վորի հանցանքի հետևանքով խոճկորը սատկել է, նրան հասանելիք աշխորերից պահել 2 աշխոր (տույժ), յերկրորդ սատկածի դիմաց՝ 3 աշխոր, իսկ 3-րդ և ավելի սատկումների դիմաց՝ վոչ պակաս 5 աշխորից։ Յերկու ամսականից բարձր հասակ ունեցող յուրաքանչյուր սատկած խոճկորի դիմաց հետ պահել վոչ պակաս 10 աշխոր։

3. Յուրաքանչյուր սատկած գառի համար, մինչև 2 ամսական հասակը, այն կոլտնտեսականից, վորի հանցանքով սատկել է գառը, նրան հասանելիք աշխորերից պահել 2 աշխոր, իսկ 2 ամսականից բարձր յուրաքանչյուր գառի դիմաց՝ վոչ պակաս 6 աշխորից։

4. Պարտավորեցնել կոլտնտեսությունների վարչություններին և ֆերմաների վարիչներին, յուրաքանչյուր անգամ սատկած մատղաշի համար մանրակրկիտ քննություն կատարել և հայտնաբերել պատճառներն ու հանցավորներին։ Վերջինների նկատմամբ, բացի նախատեսված տույժից, յենթարկել նաև դատական պատասխանատվության։

5. Վերը նշված յուրաքանչյուր ցուցանիշ, յելնելով տեղական պայմաններից, կարող է փոփոխման յենթարկվել, բայց վոչ մի դեպքում չի թույլատրվում այդ կատարել ի հաշիվ արտադրական ցուցանիշների (նորմաների) իջեցման։

ՀՈՂ.ԺՈՂ.ԿՈՄ՝ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ



Академии
ССС

ԳՐԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ПРИКАЗ НАРКОМЗЕМА ССРА

О премировании колхозников, обслуживающих обобществленное стадо колхозов

Сельхозгиз 1934 Эривань

ՀՀ Ազգային գրադարան
NL0295033

14801